ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/11

ք. Երևան «3» փետրվարի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5,921,100.00** (հինգ միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ 20 % ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը գործող ստանդարտների պահանջներին:

4.2 Ապրանքների համար սահմանված երաշխիքային ժամկետները նշված են Հավելված 1 (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ)-ում: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի, ոչ Գնորդի մեղքով առաջացած թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011013902 ՀՎՀՀ 02647057 Գլխավոր քարտուղար Է. Գեվորգյան /ստորագրություն/ Կ.Տ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50 «Թեքեյան բիզնես կենտրոն» «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570005003790100 ՀՎՀՀ 01204713 Գլխավոր տնօրեն Ռ. Եսայան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«3» փետրվարի 2021թ. կնքված
«ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/11» պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ — դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
Տեսակոնֆերանս համակարգ Aver SVC500 32231220/501	AVer SVC500 բազմակետ տեսակոնֆերանս համակարգ (լրակազմ) / AVer SVC500 Multi Point Video Conference System (set): - Բազմակետ՝ նվազագույնը 6 կետ (ընդլայնում՝ մինչեվ 16 կետ ներառյալ ծրագրային արտոնագրերի միջոցով) տեսակոնֆերանս համակարգ -1 հատ / Multi point Video Conference System (VCS) – at least 6 simultaneous points (upgradeable up to 16 points via software licenses) - 1 pcs; - Կետայնությունը՝ Full HD (1,920 x 1,080 pixels / 60fps) / Full HD (1,920 x 1,080 /60fps) resolution; - Հաղորդակցություն Microsoft Lync 2013 & Skype for Business 2016, WebRTC (առանձին ծրագրային ապահովման արտոնագիր) համակարգերի հետ / Support of Microsoft Lync 2013 & Skype for Business 2016, WebRTC (License Required) - H.323, SIP, Microsoft Lync 2013, Skype for Business 2016 և WebRTC ծրագրերի փոխհաղորդակցություն / Mixed protocols between H.323, SIP, Microsoft Lync 2013, Skype for Business 2016 and WebRTC. - Ավտոֆոկուս, 18-x ընդհանուր խոշորացում (12-x օպտիկական + 1.5-x թվային), ±110° Pan, ±25° Tilt, 72°/43° FOV (H/V), 82° FOV (diagonal) /Auto Focus , 18-x Total Zoom (12-x Optical + 1.5-x Digital Zoom), ±110° Pan, ±25° Tilt, 72°/43° FOV (H/V), 82° FOV (diagonal); - Երկրորդ տեսախցիկի հնարավորություն / Second Camera Support; - Երկրորդ տեսախցիկի հեռակառավարում (RS-232 with visca/pelco-d/pelco-p միջոցով) / 2-nd camera control from RS-232 with visca/pelco-d/pelco-p; - Երկու տեսախցիկների և երկակի կոնտենտի արտապատկերելու հնարավորություն «Կողք կողքի» կամ «պատկերը պատկերի մեջ (4 տեսապատկերների միաժամանակյա	հատ	5,095,380.00	5,095,380.00	1	ՀՀ ՊԵԿ ք.Երևան, Իսակովի 10/16	Ապրանքի մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում

		արտացոլումը իր մեջ ներառում է 1-ին և 2-րդ տեսախցիկները + երկու տարբեր կոնտենտ) /Dual camera and dual content image by Side-by-Side or PIP (4 Video Transmission simultaneously includes Primary camera + 2nd camera + 2 Different contents); - Տեսախցիկի 100 նախընտրության հնարավորություն / 100 Camera Presets; - Համարների արագ հավաքում Hot ստեղներով (10 հատ) / Speed Dialing via Hot keys (10 sets); - Հեռախոսագրքի ներբեռնում / վերբեռնում / խմբագրում; Զանգերի պատմության արտահանում /Phonebook Download/Upload/Edit; Export Call History; - Հանդիպման ընթացքում և հանդիպումից դուրս ձայնագրություն ներկառուցված 32 ԳԲ հիշողության վրա և ուղղակի պահպանում USB կրիչի վրա /In Meeting and offline recording to Built-in 32 Gb Recording Storage and Save directly to USB flash drive; - Ձայնագրված հանդիպումների նվագարկում /Playback of recorded meetings; - Նվագարկման ընթացքում պատկերների վերադասավորման հնարավորություն / Supports screen re-layout during playback; - Երկու մոնիտորի միացման և պատկերի ֆիքսման հնարարորություն / Dual Monitor Support and SnapShot; - Ինտերնետի միջոցով հեռակառավարում իրական ժամանակում եւ մոնիտորինգ / Remote Management and Live Monitoring through the Web; - Ներկառուցված ծրագրային ապահովման թարմացում համակարգչային ցանցի կամ USB կրիչի միջոցով / Firmware Update via Ethernet or USB Flash Drive, - Screen Share & VCLink software ծրագրային ապահովում / ScreenShare software (Wirelessly share content) & VCLink software (Control and Sharing in smartphone); - iSCSI հիշողության սարգի կարգավորում / iSCSI storage device settings; - Էկրանի պատկերի պահպանում և ավտոմատ սնուցման անջատում / Screensaver and auto power off mode; - Խմբային զանգ / Group calling; - SIP զանգերի օժանդակություն / Supports SIP voice calls; - Ներկառուզված SIP server (մինչև 100 գրանցումներ, 50 զույգ զանգեր) / Built-in SIP server (Up to 100 Registrations, 50 Pair calling); - Հանդիպման նույնականացման և բարձր որակի ռեժիմներ / Meeting ID method and High-Res mode; - 3D Denoise; Վիդեո ստանդարտներ / Video standards & protocols : - H.261, H.263, H.263+, H.264, H.264 HP, H.264 SVC, H.239 dual video streams; - BFCP կոնտենտի բաշխում / BFCP content sharing; - RTMP տեսապատկերի կենդանի հեռատարածման համար / RTMP for live						

		video streaming; - Սխալների նախապես ուղղում / Forward Error Correction (FEC); - Տեսափաթեթների 30% հակակորուստ / Anti 30% video packet loss with FEC; Այլ աջակցվող ստանդարտներ / Other supported standards: H.221, H.224, H.225, H.231, H.239, H.331, H.241, H.243, H.245, H.281, H.323 Annex Q, H.460, RTP, RTCP, H.350, SRTP, H.235, SNMP, NTP Ձայնային ստանդարտներ և արձանագրություններ / Audio standards: G.711, G.722, G.722.1, G.728, G.722.1C, AAC-LD, G729 Անվտանգություն / Security - AES (Advanced Encryption Standard) function (128-bit); - Գաղտնաբառով պահպանություն համակարգի կարգավորումների համար / Password protection for system settings; - Գաղտնաբառով պահպանությունը համակարգի հեռավար կառավարման համար / Password protection for remote system management; Ցանց / Network: - NAT /Firewall շրջադարձում / NAT /Firewall traversal; - IPv4 և IPv6 օժանդակություն / IPv4 and IPv6 support; - Բարձր էֆֆեկտիվությանմբ կորած փաթեթների վերականգնում / High Efficiency Lost Packet Recovery (HELPeR™); - API support via Telnet & Wake-on-LAN (WOL) support; - 10/100/1,000 Mbps; - Quality of Service (QoS); - Ցանցի թեստ/ Network test; - Ցանցային ժամանակի արձանագրություն / Network Time Protocol (NTP); - VLAN (802.1Q/802.1P); - EAP 802.1x; Աուդիո հատկանիշներ / Audio features: - Ավտոմատ ուժգնության կարգավորում / Automatic gain control (AGC); - Ակուստիկ արձագանքի չեզոքացում / Acoustic echo cancellation (AEC); - Աղմուկի առաջավոր նվազեցում / Advanced noise reduction; Մուտքային տերմինալներ՝ / Inputs: - Video: eCam PTZ III x 1 (Main camera) , HDMI x 2 (for 2nd camera , for presentation), DVI-I /VGA x 2 (for presentation); - Audio: Line-in (3.5 mm) & microphone daisy chain up to 4, HDMI x 1; Ելքային տերմինալներ՝ / Outputs: - Video: HDMI x 2; - Audio - Digital audio (HDMI) & Line-out (3.5 mm); - 2 x USB 2.0 ports; - RJ-45; Լրակազմը բաղկացած է / Package consists of: - Հիմնական համակարգ (կոդեկ) - 1 հատ / Main system unit (codec) – 1 pcs; - eCam PTZ III տեսախցիկ – 1 հատ / eCam PTZ III camera – 1 pcs;						

		- SVC խոսափող 5 մ մալուխով - 1 հատ / Microphone with 5 m cable – 1 pcs; - IR հեռակառավարման վահանակ - 1 հատ / IR Remote Control – 1 pcs; - Սնուցման բլոկ և մալուխներ / Power supply & cables; - Տեսախցիկի պատի կախոց - 1 հատ / Camera wall mount - 1 pcs; - Երաշխիք՝ 5 տարի / 5 Year Warranty. Արտադրված է AVer Information Inc. (Թայվան) ընկերության կողմից / Manufactured by AVer Information Inc. (Taiwan).						
	Պրոֆեսիոնալ հեղուկ-բյուրեղային դիսպլեյ Clevertouch CTL-55DS4KV 32321150/501	Clevertouch CTL-55DS4KV պրոֆեսիոնալ հեղուկ-բյուրեղային դիսպլեյ - 1 հատ / Clevertouch CTL-55DS4KV Professional LCD Public Display - 1 pcs: Հատուկ հնարավորություններ / Special Features: - Կոմերցիոն դասի հեղուկ-բյուրեղային պանել եզրային լուսավորությամբ / Commercial grade LCD panel with Edge LED backlight; - Աշխատանքային ռեժիմը (ժամ/օր) / Operation mode (hours/days) – 16/ 7; - Աշխատանքային դիրքը՝ Լանդշաֆտ / Դիմանկար / Orientation: Landscape/Portrait; - Ներկառուցված Անդրոիդ համակարգիչ / Built-in Android PC (SOC) - Android v. 7.1.2, 8 GB EMMC, Built in Scheduler, ARC, CEC, Real time clock - Manual/Network/ No backup/NTP; CleverMessage Signage App; - Տեղեկատվության անլար փոխանցում (Wireless (2.4GHz / 5GHz) - 802.11ac - Android/ MainIC Shared) և RS- 232 հսկողություն՝ սենյակների կառավարման համակարգերի հետ ինտեգրման համար / Wireless display connectivity (Wireless (2.4GHz / 5GHz) - 802.11ac - Android/ MainIC Shared) and RS-232 control for Professional meeting room integration with control systems; - Ներկառուցված թվային գովազդային տեղեկատվության նվագարկման համակարգ՝ ամբողջ էկրանով պաստառներ և տեսանյութեր ցուցադրելու համար / Inbuilt Digital Signage for playing out full screen posters and videos; - Daisy Chain HDMI I/O, UHD Daisy Chaining, - Անկյունագիծ / Diagonal - 55" (139,7 cm); - Կետայնություն՝ իսկական (ֆիզիկական) / Native Resolution - 4K/Ultra HD (3,840 x 2,160 pixels); - Պայծառություն/ Brightness - 500 cd/m²; - Կոնտրաստ/ Contrast - 1,200:1; - Դինամիկ կոնտրաստ / Dynamic contrast ratio - 50,000:1; - Գույների վերարտադրություն / Display colors: 8 bit /16.7 M colors; - Արձագանքի ժամանակ՝/ Response Time - 6 ms; - Դիտման անկյուն (հորիզոնական/ուղղահայաց) / Viewing Angle (horizontal/vertical) - 178°; - Մուտքային տերմինալներ՝ / Inputs: 3 x HDMI (2.0); 1 x VGA; 1 x RCA (L/R); 2 (1 x internal) x USB 2.0; USB Media Player File Support Type - jpeg/MP4 with auto play; 1 x RS-232 (9 pin D-SUB); 1 x LAN (RJ-45); 1 x OPS	հատ	825,720.00	825,720.00	1	ՀՀ ՊԵԿ ք.Երևան, Իսակովի 10/16	Ապրանքի մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում

		Slot; - Ելքային տերմինալներ՝ / Outputs: 1 x HDMI; 1 x Mini Jack (Audio) – HP output; 1 x Optical (SPDIF); Headphone; - Ներկառուցված բարձրախոս / Built-in speaker - 2 x 8W; - Clevertouch heavy duty wall mount, 55" – 86" անկյունագծով դիսպլեյների համար պատի կախոց (քաշի կարողություն՝ մինչեվ 90 կգ) - 1 հատ / Clevertouch heavy duty wall mount, , for 55" - 86" displays (weight capacity – up to 90 kg) - 1 pcs; - Երաշխիք՝ 3 տարի /3 Year Warranty. Արտադրված է Sahara Presentation Systems PLC (Մեծ Բրիտանիա) ընկերության կողմից / Manufactured by Sahara Presentation Systems PLC (UK).						

Սարքավորումները **նոր են, չօգտագործված** և **գործարանային փաթեթավորմամբ**:

Ապրանքի տեղափոխումը, տեղադրումը, միացումը, փորձարկումը, **ինչպես նաև** Պատվիրատուի անձնակազմի ուսուցումն **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**-ի՝ որպես **Aver Information Inc.** (Taiwan) և **Sahara Presentation Systems PLC** (UK) ընկերությունների **Հայաստանում միակ լիազորված պաշտոնական դիստրիբյուտոր** և **սպասարկման** (սերվիս) **կենտրոն** մասնակերպության կողմից իրականացվում է **պայմանագրի գնի շրջանակներում:**

Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011013902
ՀՎՀՀ 02647057
Գլխավոր քարտուղար Է. Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50
«Թեքեյան բիզնես կենտրոն»
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005003790100
ՀՎՀՀ 01204713
Գլխավոր տնօրեն Ռ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 3 » 02 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 3 » 02 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն